701 Ով անպտուղ երկիր, չոր, անծայրածիր

1. Ով անպտուղ երկիր, չոր, անծայրածիր
Եվ ամայի, մռայլ՝ դո՛ւ, Վորկուտա,
Որ բռնեցիր ճիրաններում պողպատի
Աստծո համար հալածված սուրբ վկաներին:

2. Խավար երկիր, սակայն մեր շրթունքները
Քո ականջին անեծք չեն շշնջա,
Դաժան ձմռան քո սառը համբույրները
Աստծո որդկանց սրտում բարի հուշ կմնան:

3. Եվ չեն կարող հողմերը քո սառնաշունչ
Մեր սրտերում սուրբ կրակը մարել,
Մեր շուրջբոլորը ծակող փշալարերը
Անզոր են սուրբերի հոգին գերեվարել:

4. Ծ, տե՛ս, հյուսի՛ս, քո լերկ տափաստաններում
Արդեն աճում են Սուրբ Խոսքի սերմեր,
Եվ ամայի ձգված անապատներում
Բերք կժողվեն գալիք օրերում սերունդներն:

5. Կգա օրը, կլսվի Տիրոջ ձայնը.
«Բա՛վ է, հյուսի՛ս, բա՛ց թող գերիներին,
Գարուն եկավ, առատ է Տիրոջ հունձքը
Գործի համար շուտով ճամփի՛ր որդիներիս»:

6. Ու կքանդվեն կապանքն ու շղթաները
Գերությունից որդիք կելնեն մարտի,
Ու զորություն կառնեն նրանց սրտերը,
Որ Սուրբ Խոսքը տանեն ազգերին: